«ԳՕԼԴՇԻՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ - 09427863

Իրավաբանական հասցե՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 39ա-15
Հեռախոս՝ 094-999404, 094-141441

N -13

14.05.2024թ.

Կապան համայնքի ղեկավար

պարոն Գևորգ Փարսյանին

Հարգելի պարոն Փարսյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «ԳՕԼԴՇԻՆ» ՍՊ և «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերությունները ՀՀ Սյունիքի մարզի Աճանան բնակավայրի վարչական տարածքում, 1,563 հա մակերեսով հողամասում նախատեսում են կառուցել կրթահամալիր՝ 144 տեղ/հզորությամբ երկհարկանի միջնակարգ դպրոց և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզ:
Նախատեսվում է նաև կառուցել

- բաց խաղադաշտ՝ արհեստական խոտածածկով,
- մարզասրահ և հանդիսությունների սրահ,
- արևային ֆոտովոլտային կայան, առնվազն 500Վտ հզորությամբ պանելներով:

Հաշմանդամների համար իրականացվելու են մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Մուտքի հատվածում տեղադրվելու է տեղեկատվական վահանակ, որում արտացոլվելու է օբյեկտի շինարարական աշխատանքների ժամկետների, շինարարության թույլտվության, պատվիրատու և կապալառու կազմակերպությունների անունները, այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Շինարարական հրապարակը ժամանակավոր ցանկապատվելու է անթափանց նյութից պատրաստված ցանկապատով:

Կրթահամալիրը նկուղային հարկում ունենալու է նաև թաքստոց:

Հարգանքներով՝

Տնօրեն Ն.Հակոբյան

14.05.2024թ.

Сканировано с CamScanner